պետն, և գնացեալ յԱստուածածին զՄուղնեցի Մարտիրոս վարդապետն եւ զՄարտիրոս վարդապետն՝ Երուսաղէմայ հայրապետին աշակերտ բերաք եւս, եւ սիրով ուղարկեցաք զնոսա ի տեղիս իւրեանց և զնընջեցեալն՝ առ Քրիստոս։

(ՌՃԵ = 1656)

Յունվար ամիս օր Գշի. եկան իրիցունք, որք գնացին բերել զեղիազար վարդապետն. ոչ է եկեալ, այլ թուղթ առաքեալ առ իշխանսն և առ Առաջնորդն (ՌԵրէ)։

Ի Յունվարի Զշի երեկոյիս Եղիազար վարդապետն եկն ի Պուրսայու յԱստուածածին եւ անտի ի Սուրբ Նիկողոս տարաք։ Յաւուրս ի Ղալաթայ հացածախ ոմն տէզկեահտար ի պէտս խօսից ինչ առ տաճիկն երդուի ի միութիւն Աստուծոյ, և տաճիկն կալեալ զնա, տարեալ առ բռնաւորն, ահացուցեալ զնա մեծաւ սպառնալեօք թէ Մօսքդ տաճկի է և լե՛ր տաճիկ. ուրացուցին։

Ի. բարեկենդան Առաջաւորաց։ Յակոբն Էջմիածնէ եկն թղթիւք կաթողիկոսին Յակոբայ առ ի խաղաղացնել զերկոսին կողմն և հաշտեցնել։

Բշի (28 Յ--Ն--ար) առաւօտուս ժողովեցան ի Զ եկեղեցոյ իշխանք և երիցունք ամենայն և նստան ի Սուրբ Նիկողոս և բերին զՄուղնեցին յԱստուածածնէ եւ զեղիազարն ձայնեցին ի սինհոդոսն եւ ոչ կամէր գալ թէ ես վան բանին երուսաղէմայ եմ եկեր, ի՞նչ կոծ է թղթիցդ, թէ կայ ինձ թուղթ՝ բերջիք զիմն։ Եւ աղաչեալ եղեն իշխանքն, և ապայ եկն և նստաւ